

ՊԵՏՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏ ԿՐԷՏ

Իրական կորուստ մըն է ազգին համար Պետրոս Հայրապետ Կրէսին մահը, այսօր մանաւանդ երբ հեռակէտ պակասող մեծհոգի անձնաւորութեանց տեղը կը մնայ անդամանելի, չըսելու համար քաղաւր:

Պետրոս Հայրապետ Կրէս, բարերար եւ մեկենաս, ծնած է 1865ին Նոր-Ջուղա, բարեմայն ծնողէ: Տոմարն նախահայր ժ.է. դարուն եկած է Կրէսէ կղզիէն, որուն պատճառաւ հանգուցեալը Կրէս կամ Կրէսացի կոչուած է: Պատանութեան հասակէն Ն. Ջուղայէն Կալկաթա կուգայ ուսանելու, եւ կ'աւակերտի Հայկական Մարդասիրական ձեմարանին, յաջողութեամբ աւարտելով անոր ընթացքը 1883ին. ապա կ'ընդգրկէ առեւտրական ասպարէզը, գործունէութեան գծին ընտրելով նախ ի Կանխուր, վերին Հնդկաստան, եւ յետոյ Կալկաթա: Ուշիմ եւ աշխուշ, կը յաջողի նման իր նախնիներուն՝ Հնդկահայոց, որոնց արտօրները բազմապէս եւ առեւտրական գծերի վրայ եղած են այնքան պատուաբեր, այս ցեղին անմահական յաջկոխութիւններու տեսակէտով:

Կրքատէր եւ հայրենատէր, քանիցս հոգաբարձու եղած է Մարդասիրական ձեմարանին, ինչպէս նաեւ եկեղեցական Կալկաթայի Ս. Նազարէր եկեղեցիին:

Մտազինս կը վերլիւծենք իր մեկենասութիւնը Պատմութիւն Հայ Տարազին, եւ Պատմութիւն Քրիստոսի գիրքերուն, որոնց հրատարակման ծախքը հոգացած է, յայտարարելով այս կերպ իր քմբունումը հայ մշակոյթի, եւ կրօնական գրականութեան մասին:

Ամենակարեւորը սակայն իր մտնակցութիւնն էր հոգեւոյ Պարեան Սրբազանի յոբելանին առթիւ բացուած համագոյային հանգանակութեան, ուր իր անունը կը գրուէ իշխանական նուիրատւութեան մը փառքը իր հազար ոսկիով:

Հանգուցեալը սրտակից բարեկամն էր Տ. Թորգոմ Սրբազանի, որուն նկատմամբ պաշտելութեան կը հասներ իր սէրն ու վստահութիւնը. իր նուիրատւութեանց կարեւոր մասը ըրած է համաձայն Թորգոմ Սրբազանի մատնադրութեան:

Ձեռք կրնար տրտի յուզումով չլիւծել 300 ոսկիի իր ինքնակամ նուիրատւութիւնը Ս. Յարութեան տանարի նորոգութեան, ի յայտ բերելով այսպէս իր հաւատքին եւ սիրոյն անքիծ հրաշքը այդ սրբազան նպատակին մէջ:

Հանգուցեալ Թորգոմ Սրբազանէն Պ. Կրէսի գրուած վերջին նամակէն կը տեղեկանանք թէ անիկա ունի կտակ մը, որմէ կը բաղենք հետեւեալ շանկեկան յօդուածները.

Ա. — Երուսաղէմի պատրիարքին տրամադրութեան ներքեւ պիտի դրուի պատշաճ գումար մը, որպէսզի վանքապետական գծերի վրայ մեծ շէնք կառուցուի, արդիւնքը յաշկացուելու համար կրօնական մրցանակի եւ մատենաշարի հրատարակութեան:

Բ. — Յետոյ իր կտակարարներու տրամադրութեան տակ դրած է կարեւոր գումար մը, որուն եկամուտովը պիտի ապահովուին իր կարգ մը ժառանգորդներու կենսապահակները: Այս վերջիններու մահէն վերջ հեռակէտ անոնց եկամուտներու մայր գումարով պիտի կազմուի մնացորդ աւանդ կոչուած մայր գումար մը, որ պիտի դրուի Հ. Բ. Ը. Միութեան տրամադրութեան ներքեւ:

Բարեգործականը այս գումարներէն պիտի կազմէ trust մը, եւ անոր հասոյթին կէտը պիտի յանձնէ Ամեն. Ս. Պատրիարք Հոր Ժառանգաւորաց Վարժարանի մէջ ուսանողներ պահելու, միւս կէտը Հայաստանի մէջ քաղաքաբուժական հիւանդանոց մը կառուցանելու համար:

Երբ կը վերջացնենք մահագրական այս քանի մը տողերը, մեր միտքը կ'երթայ իրմով այն բոլորին, որոնք չզրկուած երբեք իրենց յուման մեր ազգային կարիքներու զանձանակին, այդ կերպ արժանանալով ազգային երախտագիտութեան: Նկարագրի իրենց այդ գիծը պէտք է որոնել յանախ հոգիին մէջ այն ժողովուրդին՝ որուն զաւակներն եղան իրենք:

Պ. Կրէս իր ազգին ծոցածին զաւակը, անոր հոգիին ամենէն հարազատ ներկայացուցիչներէն մին եղաւ մեր մէջ. եւ մէկը այն եղանակի մանկանացունէն, որոնք այս կեանքին մէջ կը կերտեն իրենց անմահութիւնը:

Հանգիստ իր բարի հոգիին: